ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1 (19/20)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտ. խորհրդի 05.09.2019թ. կայացած նիստի

Խորհրդի նիստին մասնակցում էին նա 36 անդամներից 22-ը։

Օրակարգ՝

1. **Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2019/2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը:**

   Զեկ.՝ Հ.Ա. Շահինյան

2. **Տեղեկատվություն 2019/2020 ուս.տարում ֆակուլտետի բակալավրիատի ու մագիստրատուրայի համալրման մասին:**

   Զեկ.՝ պրոֆ., Խ.Վ. Ներկարարյան

3. **2019/20 ուս.տարվա 1-ին կիսամյակի ֆակուլտետի անվանական կրթաթոշակների թեկնածությունների հարցը:**

   Զեկ.՝ պրոֆ., Խ.Վ. Ներկարարյան

4. **Ընթացիկ հարցեր:**

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..

Լսեցին- Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2019/2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը։

Արտատայտվեցին.- Տեղի ունեցավ քննարկում, որին մասնակցեցին ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ. Վ. Ներկարարյանը, պրոֆեսորներ Ա.Ժ.Բաբաջանյանը ու Ֆ.Վ.Գասպարյանը։

Որոշեցին.- Նախագծում հաշվի առնել կատարված առաջարկները և հաստատել աշխատանքային պլանը։

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ. Վ. Ներկարարյանի տեղեկատվությունը 2019/2020 ուս.տարում ֆակուլտետի համալրման մասին։ Զեկուցողը բերեց թվային

տվյալներ ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի ընդունելությունների վերաբերյալ։

Արտատայտվեցին.- պրոֆեսորներ Խ.Վ. Ներկարարյանը, դոցենտներ Գ.Բ.Ալավերդյանը և Վ.Ռ.Թադևոսյանը:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն։

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- ֆակուլտետի 2019/2020 ուս.տարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակների թեկնածությունների առաջադրման հարցը

Արտահայտվեցին- ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը, ԿԷՄ ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Ա.Ժ. Բաբաջանյանը, Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ , պրոֆեսոր Կ.Մ. Ղամբարյանը:

Որոշեցին- Հաշվի առնելով ուսման գերազանց առաջադիմությունը և գիտահասարակական ակտիվությունը՝ անվանական կրթաթոշակների թափուր տեղերը հատկացնել հետևյալ մագիստրոսներին։

<u>Էմիլ Միրզաբեկյանի անվան կրթաթոշակ</u>

1. **Իսրայելյան Դավիթ Սամվելի – մագիստրատուրա 2-րդ կուրս**

<u>Ալիխանյան եղբայրների անվան կրթաթոշակ</u>

2. **Հարությունյան Գևորգ Գարեգինի- մագիստրատուրա 2-րդ կուրս**

<u>Յուրի Բախշյանի անվան կրթաթոշակ</u>

3. **Միրոյան Ռուբեն Արտեմի- բակալավրիատ, 4-րդ կուրս**

<u>Յակոբ Զարոբյանի անվան կրթաթոշակ</u>

4. **Պետրոսյան Նանե Զոհրաբի – բակալավրիատ, 3-րդ կուրս**

Օրակարգի ընթացիկ հարցերում

Լսեցին- - Ե.27.01 "Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա" մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ ***Գեղամ Արծրունու Պետրոսյանի*** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին- 1) ասպիրանտ ***Գեղամ Պետրոսյանի*** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «**Անալոգային ինտեգրալ սխեմաների հուսալիության բարձրացման միջոցների մշակում**»:

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տ.գ.դ., պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյանին**:

Լսեցին- -Ա. 04.03-“Ռադիոֆիզիկա” մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ ***Բիլլի Ժան-Լուիի Մինասյանի*** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին- 1) ասպիրանտ ***Բիլլի Մինասյանի*** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «**Նանոկառուցվածքներում ալիքային դաշտերի արտապատկերումը ջերմաառաձգական ինդիկատորով մանրադիտակով**»:

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Կիրառական էլեկտրադինամիկա և մոդելավորում ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր **Ա.Ժ.Բաբաջանյանին**:

Լսեցին- -Ա. 04.03-“Ռադիոֆիզիկա” մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ ***Բաբկեն Արթուրի Հովհաննիսյանի*** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին- 1) ասպիրանտ ***Բաբկեն Հովհաննիսյանի*** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «**Կենսաազդանշանների հետազոտումը բարձր կարգի սպեկտրալ վերլուծության միջոցով**»:

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ., **Ա.Հ.Մակարյանին**:

Լսեցին- - Ա. 04.10-“Կիսահաղորդիչների ֆիզիկա” մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ ***Արեգ Աշոտի Հունանյանի*** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին- 1) ասպիրանտ ***Արեգ Հունանյանի*** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «**Երկչափանի նյութերի վրա գազերի ադսորբցիայի հետազոտումը խտության ֆունկցիոնալի տեսությամբ**»:

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ., **Վ.Մ.Հարությունյանին**:

Լսեցին – **18T-1C114** «**Նանոհամակարգերից լուսային ազդանշանի արձագանքը և դաշտերի բաշխվածությունների արտապատկերումը ջերմաառաձգական օպտիկական մանրադիտակով**» գիտական թեմայի 2019 թ. ընթացիկ հաշվետվությունը (ղեկավար՝ Ա.Ժ. Բաբաջանյան) :

Որոշեցին - Հաշվի առնելով նշված թեմայի գծով պլանավորված աշխատանքների կատարողականը՝ հաստատել **18T-1C114** ծածկագրով թեմայի 2019 թ. ընթացիկ հաշվետվությունը:

Լսեցին – **18T-1C199** **«Օպտիկական ուղղման միջոցով մեծ սպեկտրալ լարքավորմամբ տերահերցային ալիքային փաթեթի գեներացումը արհեստական քվազիփուլահամաձայնեցնող կառուցվածքներում»** գիտական թեմայի 2019 թ. ընթացիկ հաշվետվությունը (ղեկավար՝ Յու.Հ. Ավետիսյան) :

Որոշեցին - Հաշվի առնելով նշված թեմայի գծով պլանավորված աշխատանքների կատարողականը՝ հաստատել **18T-1C199** ծածկագրով թեմայի 2019 թ. ընթացիկ հաշվետվությունը:

Լսեցին – **18T-2J016** **«InAs-InSb-InP նյութական համակարգում կոնաձև և էլիպսարդաձև քվանտային կետերի և կղզյակների աճեցում և դրանց էլեկտրաֆիզիկական, մագնիսական ու օպտոէլեկտրոնային հատկությունների հետազոտում»** գիտական թեմայի 2019 թ. ընթացիկ հաշվետվությունը (ղեկավար՝ Կ.Մ. Ղամբարյան) :

Որոշեցին **-** Հաշվի առնելով նշված թեմայի գծով պլանավորված աշխատանքների կատարողականը՝ հաստատել **18T-2J016** ծածկագրով թեմայի 2019 թ. ընթացիկ հաշվետվությունը:

Օրակարգը սպառված է:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր՝ Խ.Վ. Ներկարարյան

Գիտքարտուղար Հ.Ա. Ճահինյան